Հիմնավորում

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 -2027 ԹՎԱԿԱՆՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 195-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ 3-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1. հոդվածի պահանջներով, առաջարկվում է

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025 -2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին որոշման հավելված 3-ում կատարել հետևյալ փոփոխությունները

1) ՀՀ կառավարության կողմից համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում նախատեսված «Գավառ քաղաքում, Ծովազարդ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան, Կարմիրգյուղ, Գանձակ և Բերդկունք գյուղերում ասֆալտապատման աշխատանքներ» ծրագրի նպատակով բյուջետային 04.5.1 գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարը պակասեցնել 30.000,000 /երեսուն միլիոն/ ՀՀ դրամով, որից՝

2) ՀՀ կառավարության կողմից համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում նախատեսված «Գավառ համայնքում ոռոգման և ջրահեռացման համակարգերի կառուցման աշխատանքներ» ծրագրի նպատակով բյուջետային 04.2.4 գործառնական դասակարգման 5112 տնտեսագիտական հոդվածը ավելացնել 5. 000,000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամով

3) ՀՀ կառավարության կողմից համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում նախատեսված «Ծաղկաշեն գյուղի գյուղապետարանի շենքի կառուցման աշխատանքներ» ծրագրի նպատակով բյուջետային 01.1.1 գործառնական դասակարգման 5112 տնտեսագիտական հոդվածը՝ 15. 000,000 /տասնհինգ միլիոն/ ՀՀ դրամով

4) ՀՀ կառավարության կողմից համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում նախատեսված «Գավառ քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի, տանիքների հիմնանորոգման և արտաքին լուսավորության անցկացման աշխատանքներ» ծրագրի նպատակով բյուջետային 06.1.1 գործառնական դասակարգման 5113 տնտեսագիտական հոդվածը՝ 10. 000,000 /տաս միլիոն/ ՀՀ դրամով